

## ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«ԱՐՑԱԽ ՀԵԿ» բաց բաժնետիրական ընկերություն  
բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ  
Արձանագրություն N \_\_\_\_\_, \_\_\_\_\_ 2010թ.

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



«ԱՐՑԱԽ ՀԵԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ստեփիանակերտ 2010թ.



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ.....	3
2. Հահութաբաժնների մասին դրույթներ.....	3
3. Ընկերության շահութաբաժնային քաղաքականության սկզբունքները.....	3
4. Հահութաբաժնների վճարման մասին որոշման ընդունման կարգ .....	4
5. Հահութաբաժնների հաշվարկումը.....	5
6. Հահութաբաժններ ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակ.....	5
7. Հահութաբաժնների վճարման կարգը և ժամկետները.....	5
8. Արտոնյալ բաժնետոմսերին շահութաբաժնների վճարման առանձնահատկություններ.....	6
9. Հահութաբաժնների վճարման սահմանափակումները.....	6
10. Բաժնետերերին Ընկերության շահութաբաժնային քաղաքականության մասին տեղեկացում .....	7

## 1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Սույն կանոնակարգը մշակված է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԼՂՀ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի, «Արցախ ՀԵԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրության պահանջներին համապատասխան և սահմանում է Ընկերության շահութաբաժնային քաղաքականության հիմնական սկզբունքները, շահութաբաժնների վճարման մասին որոշման ընդունման, շահութաբաժնների հաշվարկման կարգը:

## 2. Շահութաբաժնների մասին դրույթներ

- 2.1. Շահութաբաժնները հանդիսանում են Ընկերության գուտ շահույթի (կուտակված շահույթի) մի մասը, որը բաշխվում է բաժնետերերի միջև՝ նրանց պատկանող բաժնետոմսերի քանակին համամասնորեն:
- 2.2. Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դիմաց շահութաբաժնների վճարման մասին որոշման ընդունումը հանդիսանում է Ընկերության իրավունքը և ոչ թե պարտականությունը:

Հայտարարված շահութաբաժնների վճարումը Ընկերության պարտականությունն է, որի համար Ընկերությունը պատասխանատվություն է կրում շահութաբաժններ ստանալու իրավունք ունեցող անձանց առջև ԼՂՀ օրենսդրությանը համապատասխան:

Ընկերությունը վճարում է միայն հայտարարված շահութաբաժնները: Շահութաբաժնների վճարման մասին որոշման բացակայության դեպքում Ընկերությունն իրավունք չունի վճարել, իսկ Ընկերության բաժնետերերը՝ պահանջել շահութաբաժնների վճարում:

- 2.3. Շահութաբաժնները վճարվում են ՀՀ դրամով:

- 2.4. Ընկերության Գլխավոր տնօրենն ապահովում է հայտարարված շահութաբաժնների ժամանակին և լիարժեք վճարումը:

## 3. Ընկերության շահութաբաժնային քաղաքականության սկզբունքները

- 3.1. Ընկերության շահութաբաժնային քաղաքականությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.
- ա) գուտ շահույթի (կուտակված շահույթի) առկայության դեպքում Ընկերությունը դրա որոշակի մասն ուղղում է շահութաբաժնների վճարմանը, իսկ Ընկերության տնօրինության տակ մնացած շահույթն օգտագործում է վերաներդրման համար՝ Ընկերության աճի նպատակով,
- բ) Ընկերության և նրա բաժնետերերի շահերի օպտիմալ համադրություն,
- գ) Ընկերության ներդրումային գրավչության և նրա կապիտալիզացիայի բարձրացման անհրաժեշտություն,
- դ) ԼՂՀ օրենսդրությամբ և կորպորատիվ վարքագծի սովորություններով նախատեսված՝ բաժնետերերի իրավունքների հարգում և խիստ պահպանում,

- ե) շահութաբաժնների չափի սահմանման և դրանց վճարման մեխանիզմների թափանցիկություն,
- 3.2. Ընկերության տնօրենների խորհուրդը (այսուհետ՝ Խորհրդի) միջանկյալ շահութաբաժնների չափը որոշելիս հիմնվում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների տվյալներով սահմանված գուտ շահույթի մեծության վրա:
- 3.3. Տարեկան շահութաբաժնների առաջարկվող չափը, որպես Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին (այսուհետ՝ «Ժողով») առաջարկ, սահմանվում է Խորհրդի կողմից Ընկերության գործունեության ֆինանսական արդյունքներով, բայց, որպես կանոն, չպետք է պակաս լինի Ընկերության գուտ շահույթի 20 տոկոսը:

#### 4. Շահութաբաժնների վճարման մասին որոշման ընդունման կարգ

- 4.1. Միջանկյալ շահութաբաժնների վճարման, այդ թվում՝ շահութաբաժնների չափի և դրանց վճարման ձևի որոշումը ընդունվում է Խորհրդի կողմից: Միջանկյալ շահութաբաժնների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը:
- 4.2. Տարեկան շահութաբաժնների վճարման, այդ թվում՝ շահութաբաժնների չափի և դրանց վճարման ձևի որոշումը ընդունվում է ժողովի կողմից: Տարեկան շահութաբաժնների չափը չի կարող ավելի լինել Խորհրդի առաջարկից և պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժնների չափից:

Եթե ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժնների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժնների չափին հավասար, բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժններ չեն վճարվում:

Եթե ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժնների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժնների չափից ավելի, ապա շահութաբաժնները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժնների գումարի տարբերության չափով:

- 4.3. Շահութաբաժնների վճարման մասին որոշմամբ պետք է սահմանվեն.
- ա) շահութաբաժնի չափը մեկ բաժնետոմսի հաշվարկով (ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի),
- բ) շահութաբաժնների վճարման ժամկետները,
- գ) շահութաբաժնների վճարման ձևը:
- 4.4. Միջանկյալ շահութաբաժնների վճարման մասին որոշում կարող է ընդունվել համապատասխան ժամանակաշրջանի (եռամսյակի կամ կիսամյակի) ավարտից հետո 60 օրվա ընթացքում:
- 4.5. Տարեկան շահութաբաժնների վճարման մասին հարցը ժողովի օրակարգում ընդգրկվում է, որպես առանձին հարց կամ Ընկերության շահույթի բաշխման մասին որոշման բաղկացուցիչ մաս:

Տարեկան շահութաբաժնների վերաբերյալ Խորհրդի առաջարկությունները պետք է ձևակերպված լինեն տնօրենների խորհրդի նիստի արձանագրությամբ, որը (որի քաղվածքը) պետք է հասանելի լինի Ընկերության բոլոր բաժնետերերին ծանոթանալու համար:

## 5. Հահութաբաժնների հաշվարկումը

- 5.1. Որպես շահութաբաժնների վճարման աղբյուր հանդես է գալիս Ընկերության գուտ շահույթը (Ընկերության կուտակված շահույթը):
- 5.2. Շահութաբաժններ չեն հաշվարկվում և չեն վճարվում հետևյալ բաժնետոմսերի դիմաց。
  - ա) չտեղաբաշխված (շրջանառության մեջ չգտնվող),
  - բ) Ընկերության տեղաբաշխված այն բաժնետոմսերը, որոնք սեփականության իրավուքնով պատկանում են Ընկերությանը,
  - գ) ԼՂՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

## 6. Հահութաբաժններ ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակ

- 6.1. Շահութաբաժնների յուրաքանչյուր վճարման համար Խորհրդության կազմում է շահութաբաժններ ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակ, որում ընդգրկվում են՝
  - ա) միջանկյալ շահութաբաժններ վճարելու դեպքում՝ Ընկերության բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում Խորհրդի միջանկյալ շահութաբաժններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից 10 օր առաջ,
  - բ) տարեկան շահութաբաժններ վճարելու դեպքում՝ Ընկերության բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում ժողովին նախակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:
- 6.2. Շահութաբաժններ ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակում ներառվում են.
  - ա) ցուցակը կազմելու օրվա դրությամբ բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված սեփականատեր բաժնետերերը,
  - բ) ցուցակի կազմման օրվա դրությամբ բաժնետոմսերի սեփականատերի ռեեստրում գրանցված այլ անձինք (գրավառուները, հավատարմագրային կառավարիչները և այլն), եթե այլ բան սահմանված չէ տվյալ անձի և բաժնետիրոջ միջև կնքված պայմանագրով,
- 6.3. Շահութաբաժններ ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակը կազմելու համար բաժնետերների սեփականատերերի ռեեստրում գրանցված անվանատերերը ներկայացնում են նրանց մոտ գրանցված բաժնետերերի վերաբերյալ անհրաժեշտ տվյալներ:

## 7. Հահութաբաժնների վճարման կարգը և ժամկետները

- 7.1. Ընկերության կողմից շահութաբաժնների ստացման իրավունք ունեցող անձանց շահութաբաժնների վճարումը կատարվում է բանկային հաշիվներին կամ փոստային հասցեներին համապատասխան գումարների փոխանցման միջոցով: Բանկային հաշիվների և փոստային հասցեների մասին տեղեկությունների բացակայության դեպքում՝ Ընկերությունը

շահութաբաժնները կարող է վճարել դրամարկղից առձեռն՝ ապահովելով շահութաբաժնի ստացող անձի նույնականացումը:

- 7.2. Տարեկան շահութաբաժնների վճարման ժամկետը սահմանվում է ժողովի տարեկան շահութաբաժններ վճարելու մասին որոշմամբ:
- 7.3. Միջանկյալ շահութաբաժնների վճարման ժամկետը սահմանվում է Խորհրդի միջանկյալ շահութաբաժններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:
- 7.4. Եթե շահութաբաժնների վճարման ժամանակաշրջանի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ապա ժամանակաշրջանի վերջին օր համարվում է այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը:
- 7.5. Ընկերությունն իրավունք ունի կատարել շահութաբաժնների վճարման պարտականությունը շահութաբաժնների վճարման ժամանակաշրջանի ընթացքում յուրաքանչյուր օր՝ ներառյալ վերջին օրը:

## 8. Արտոնյալ բաժնետոմսերին շահութաբաժնների վճարման առանձնահատկություններ

- 8.1. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերին շահութաբաժններ վճարվում են հետևյալ կանոնների պահպանմամբ.
  - ա) յուրաքանչյուր դասի արտոնյալ բաժնետոմսի դիմաց վճարվող շահութաբաժնը սահմանվում է ժողովի կողմից դրամական գումարի տեսքով կամ որպես տոկոսադրույթ արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ,
  - բ) եթե ժողովի որոշմամբ թողարկվում և տեղաբաշխվում են 2 կամ ավելի ծեփական արտոնյալ բաժնետոմսեր, ապա պետք է սահմանվի նաև շահութաբաժնների վճարման հերթականությունը,
  - գ) եթեք հաջորդական տարիների ընթացքում արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժնի չվճարելը կարող է հիմք հանդիսանալ Ընկերության դատական կարգով լուծարման համար:

## 9. Շահութաբաժնների վճարման սահմանափակումները

- 9.1. Շահութաբաժնների վճարման մասին որոշման ընդունման և շահութաբաժնների վճարման դեպքում Ընկերությունն առաջնորդվում է ԼՂՀ օրենսդրությամբ և Ընկերության կանոնադրությամբ սահմանված սահմանափակումներով:
- 9.2. ԼՂՀ օրենքներով սահմանված հիմքերի առկայության դեպքում, եթե Ընկերությունն իրավունք չունի վճարել հայտարարված շահութաբաժնները, Ընկերությունը պարտավոր է դադարեցնել շահութաբաժնների վճարումը: Վերը նշված դեպքերում շահութաբաժնների վճարման դադարեցումը չի սահմանափակում հայտարարված շահութաբաժններ ստանալու բաժնետերերի իրավունքը՝ վճարումը դադարեցնելու հիմքերի վերացման դեպքում: Նման հիմքերի վերացման (դադարեցման) դեպքում Ընկերությունը պարտավոր է ողջամիտ ժամկետում վճարել բաժնետերերին հայտարարված շահութաբաժնները:



## 10. Բաժնետերերին Ընկերության շահութաբաժնային քաղաքականության մասին տեղեկացում

10.1. Ընկերությունը իր շահութաբաժնային քաղաքականության մասին տեղեկությունները հրապարակում է Ընկերության ինտերնետային կայքում հետևյալ հասցեով՝ [www.artsaakhpp.com](http://www.artsaakhpp.com):

Ընկերության կայքում տեղադրված տեղեկությունները պետք է ներառեն նաև սույն կանոնակարգը և կանոնակարգում կատարված փոփոխությունները,

Շահութաբաժնների վճարման չափի, ձևի, ժամկետների և կարգի մասին Ընկերությունը ծանուցում է բաժնետերերին Ընկերության կայքում տեղեկատվություն տեղադրելու միջոցով:

Ժողովում որոշումների ընդունման համար բաժնետերերին ներկայացվող նյութերը պետք է պարունակեն շահութաբաժնների վճարման համար անհրաժեշտ պայմանների առկայության կան բացակայության մասին տեղեկություններ:

10.2. Ընկերության կայքում և այլ միջոցներով բացահայտվող՝ շահութաբաժնների վճարման մասին որոշման ընդունման, շահութաբաժնների չափի, ձևի, ժամկետների և կարգի մասին Ընկերության կողմից հրապարկվող հաղորդագրությունը բաժնետերերին պետք է տա վերոնշյալ հարցերի վերաբերյալ միանշանակ և հստակ ցուցումներ:

Միաժամանակ, նման հաղորդագրության մեջ պետք է բացատրվի բաժնետերերին իրենց պարտականությունը՝ Ընկերությանը տեղեկացնել իրենց բանկային վավերապայմանների և փոստային հասցեների փոփոխությունների, ինչպես նաև այդ պարտականության չկատարման հետևանքների մասին: